



ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ



- ✓ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ
- ✓ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ✓ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅԱՅԻՆ ՋՐԵՐ
- ✓ ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ
- ✓ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ
- ✓ ԹԱՓՈՆՆԵՐ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	6
Երևան	6
Գյումրի	14
Վանաձոր	16
Ալավերդի.....	19
Հրազդան	22
Արարատ	25
Հանրապետության տարբեր բնակավայրեր	27
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ	28
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	28
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	34
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	39
Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	45
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	48
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	52
Ծաղկաձորում շրջակա միջավայրի մոնիթորինգ.....	58
«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»	67
Հավելված 1. ՀՀ գետերի ջրերի որակը 2018թ. հունիսին	69
Հավելված 2. ՀՀ գետերի ջրերի որակը 2018թ. 3-րդ եռամսյակում.....	77
Հավելված 3. ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2018թ. հունիսին	103
Հավելված 4. ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2018թ. 3-րդ եռամսյակում.....	104
Հավելված 5. Արաքս գետի ջրի մոնիթորինգի արդյունքները 2018թ. հունիսին.....	106
Հավելված 6. Արաքս գետի ջրի մոնիթորինգի արդյունքները 2018թ. 3-րդ եռամսյակում ..	107
Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետերը.....	114
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	118
Ստորերկրյա ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	119
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ	119
Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները.....	120
Հողում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները	120
Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը.....	121
Մակերևութային ջրերի ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ.....	122

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկագրում ներկայացված են մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի, մթնոլորտային տեղումների, հողերի, հատակային նստվածքների որակի, ինչպես նաև թափոնների մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվություն՝ 2018 թվականի 3-րդ եռամսյակն ընդգրկող ժամանակահատվածի համար:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) 100 ստորերկրյա ջրաղբյուր, ինչը ներառում է 23 շատրվանող հորատանցք, 22 չշատրվանող հորատանցք և 55 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտակումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 40 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ինդիկատորային ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր):

Ներկայումս հողային ծածկույթի մոնիթորինգ իրականացվում է Ծաղկաձոր քաղաքում: Յուրաքանչյուր հողի նմուշում որոշվում է մինչև 30 ինդիկատորային ցուցանիշ (մետաղական կազմ): Հողերի աղտոտվածությունը գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն որոշման:

Հատակային նստվածքի մոնիթորինգ իրականացվում է Արաքս գետում, որտեղ որոշվում է մինչև 30 ինդիկատորային ցուցանիշ (մետաղական կազմ):

Կոմունալ աղբավայրերի հարակից տարածքներում կայուն օրգանական աղտոտիչների պարունակությունները որոշելու համար կատարվում են հողի և ջրի

նմուշառումներ: Յուրաքանչյուր նմուշում որոշվում է մինչև 19 քլորօրգանական պեստիցիդներ և 24 պոլիքլորացված բիֆենիլներ:

Տեղեկագրում ներկայացված են նաև միջազգային համագործակցության շրջանակներում կատարվող աշխատանքների արդյունքները.

▪ «Եվրոպայում մեծ հետազոտությունների վրա օդի ատոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի դիտակայան (Ամբերդի դիտակայան): Դիտակայանի մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են կոնվենցիայի քիմիական կոորդինացիոն կենտրոն՝ անդրսահմանային օդի աղտոտվածության տվյալների միասնական համակարգի (EBAS) միջոցով, որը գործում է Նորվեգիայի օդի հետազոտության ինստիտուտի ներքո: Մոնիթորինգի և արտանետումների տվյալների հիման վրա Նորվեգիայի օդերևութաբանական ինստիտուտի կողմից կատարվում է օդի անդրսահմանային աղտոտման մոդելավորում և պատրաստվում է Հայաստանի Հանրապետության համար տարեկան զեկույց:

▪ Հայաստանի Հանրապետությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ կատարում է սահմանային Արաքս գետի ջրի և հատակային նստվածքների ուսումնասիրություններ՝ երկու երկրների տարածքներից աղտոտվածության վիճակը գնահատելու նպատակով: Պարբերաբար երկու երկրների միջև տեղի է ունենում տվյալների փոխանակում:

Տեղեկագրում օգտագործվել են հետևյալ հապավումները.

- ՄԹԿ — սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
- ԸԱԱ — ընդհանուր անօրգանական ազոտ
- ԸԼԱ — ընդհանուր լուծված աղեր
- ԿՆ — կախյալ նյութեր

ՄԹՆՈԼՈՐՏՍՅՒՆ ՕՂ

2018թ. 3-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 14 անշարժ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայան, որոնցից չորսում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են նաև ավտոմատ դիտարկումներ, և 197 շարժական պասիվ նմուշառման դիտակետ: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին ակտիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 3537 փորձանմուշ: Հանրապետության 9 բնակավայրի պասիվ նմուշառման դիտակետերից վերցվել է մթնոլորտային օդի 4683 փորձանմուշ: Երևան և Ալավերդի քաղաքների շարժական դիտակետերում կատարվել է մթնոլորտային օդի՝ համապատասխանաբար 68510 և 14703 ավտոմատ դիտարկում:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան, Ծաղկաձոր քաղաքների մթնոլորտային մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.armmonitoring.am ինտերնետային կայքում:

Երևան

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի*** և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և հինգ անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած երեք դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2018թ. 3-րդ եռամսյակում անշարժ դիտակայաններում կատարվել է մթնոլորտային օդի 68510 ավտոմատ դիտարկում, վերցվել է ակտիվ նմուշառման 1811 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից պասիվ նմուշառման 1024 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

* կախված մասնիկներ

** անհիդրիդ ծծմբային

*** ածխածնի օքսիդ

*Երևան քաղաքի մթնոլորտային օդի 2018թ. 3-րդ եռամսյակում կատարված
դիտարկումների արդյունքները (ակտիվ նմուշառում)*

Հուլիս

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)	Դիտարկումների քանակ	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.036	0.063 (դիտ. № 2)	155	19
Ազոտի երկօքսիդ	0.04	0.013	0.078 (դիտ. № 18)	155	1
Փոշի	0.15	0.130	0.540 (դիտ. № 2)	153	45
Գետնամերձ օզոն	0.03	0.009	0.023 (դիտ. № 18)	155	-




Օգոստոս

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)	Դիտարկումների քանակ	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.028	0.078 (դիտ. № 2)	155	16
Ազոտի երկօքսիդ	0.04	0.032	0.162 (դիտ. № 18)	155	36
Փոշի	0.15	0.139	0.435 (դիտ. № 18)	150	52
Գետնամերձ օզոն	0.03	0.009	0.031 (դիտ. № 1)	155	3




Սեպտեմբեր

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)	Դիտարկումների քանակ	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.033	0.093 (դիտ. № 1)	144	25
Ազոտի երկօքսիդ	0.04	0.028	0.198 (դիտ. № 18)	145	26
Փոշի	0.15	0.144	0.483 (դիտ. № 18)	144	51
Գետնամերձ օզոն	0.03	0.010	0.078 (դիտ. № 18)	145	4




Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Երևանի տանձնագիծ



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Երևանի սահմանագիծ



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)




QjnLuph

Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:



Անշարժ դիտակայանում վերցվել է մթնոլորտային օդի ակտիվ նմուշառման 81 փորձանմուշ, շարժական դիտակետերում պասսիվ նմուշառման 567 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները օգոստոս, սեպտեմբեր ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները՝



* Հուլիսին Գյումրիի քաղաքի փոշու տվյալները՝ ցածր վստահելիության պատճառով, օդի որակի գնահատման մեջ հաշվի չեն առնվել

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Վանաձոր




Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:



Անշարժ դիտակայաններում վերցվել է մթնոլորտային օդի ակտիվ նմուշառման 762 փորձանմուշ, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման 622 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան հուլիսին և օգոստոսին գերազանցել է ՍԹԿ-ն 1.6 անգամ, իսկ սեպտեմբերին՝ 1.7 անգամ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան հուլիս ամսին գերազանցել է ՍԹԿ-ն 2.5 անգամ, օգոստոսին և սեպտեմբերին՝ 1.3: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:



Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների
կոնցենտրացիաների փոփոխությունները.








Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:



2018 թվականի 3-րդ եռամսյակում անշարժ դիտակայաններում կատարվել է մթնոլորտային օդի 14703 ավտոմատ դիտարկում, վերցվել է ակտիվ նմուշառման 596 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից պասիվ նմուշառման 1076 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն հուլիսին և օգոստոսին 2.1 անգամ, սեպտեմբերին՝ 2.5 անգամ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան հուլիսին գերազանցել է ՍԹԿ-ն 2.2 անգամ, օգոստոսին՝ 2.8 անգամ, սեպտեմբերին՝ 3.2 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:


Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը





- Պայմանական նշաններ
- Պատիվ նմուշառման դիտակետեր
 - Ակտիվ նմուշառման դիտակետեր
 - Գետային ցանց
 - Զանապարհներ և փողոցներ
 - Միջպետական ճանապարհ
 - Երկաթգծեր
 - Բնակավայրերի սահման



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- Զանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրերի սահման



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)




Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետեր:



Անշարժ դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 273, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 470 փորձանմուշ:

Փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն օգոստոսին՝ 1.3 անգամ, սեպտեմբերին՝ 1.9 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Արդյունաբերական կետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Գետային ցանց
- Բնակավայրերի սահման
- Աղբյուրակ ջրամբար



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պատիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Արդյունաբերական կետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Գետային ցանց
- Բնակավայրերի սահման
- Աղբյուրակ ջրամբար



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)




Արարատ



Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Անշարժ դիտակետում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 91 փորձանմուշ, շարժական դիտակայաններում պասիվ նմուշառման եղանակով՝ 332 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Հանրապետության տարբեր բնակավայրեր

Կապան, Քաջարան, Չարենցավան քաղաքների մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: 2018 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում Կապան քաղաքի 11 շարժական դիտակետերից պասիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 152 փորձանմուշ, Քաջարան քաղաքի 15 դիտակետից՝ 204 փորձանմուշ, Չարենցավան քաղաքի 10 դիտակետից՝ 236 փորձանմուշ:

Նշված բնակավայրերի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



ՄԱԿԵՐՆՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ

2018թ. 3-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ իրականացվել են հանրապետության 43 գետի, Երևանյան լճի, Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Ազատի, Կեչուտի ջրամբարների և Արփա-Սևան թունելի դիտակետերից, որտեղից վերցվել է 257 փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել է 45-ական ֆիզիկաքիմիական ցուցանիշ: Հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների, ինչպես նաև II-րդ եռամսյակի տեղեկագրում չներկայացված ջրի որակի մոնիթորինգի արդյունքները, բերված են հավելվածներում աղյուսակների տեսքով: Մակերևութային ջրերի որոշ փորձանմուշներում որոշվել են նաև օրգանական միացությունների պարունակությունները, որոնք չեն գերազանցել համապատասխան էկոլոգիական նորմերը՝ սահմանված ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N 75-Ն որոշման հավելված N2-ում:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներ իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 100 ստորերկրյա ջրաղբյուրներում՝ որոնք ներառում են 24 շատրվանող հորատանցք, 22 չշատրվանող հորատանցք և 56 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Փամբակ գետի Հարթագյուղից վերև հատվածում ջրի որակը հուլիս ամսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս), Մայիտակից ներքև հատվածում ջրի որակը հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Վանաձորից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Վանաձորից ներքև հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Դեբեդ գետի Մարցիգետի թափման կետից ներքև հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Չորագետ գետի Ստեփանավանից վերև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Տաշիր գետի Միխայելովկայից վերև հատվածում օգոստոսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Մարատովկայից ներքև հատվածում օգոստոսին և սեպտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

* Ստորերկրյա ջրերի դիտակետերի տեսակը, համարները, տեղադիրքը տրված է տեղեկագրի 114-րդ էջում աղյուսակի տեսքով

Մարցիգետ գետի գետաբերանի հատվածում հուլիս ամսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս):


Ախթալա գետի գետաբերանում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):





Գարգառ գետի ակունքում օգոստոս ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս):

Շնող գետի գետաբերանում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի Դիլիջանից վերև հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Դիլիջանից ներքև հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Իջևանից վերև հատվածում ջրի որակը հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «լավ» (2-րդ դաս): Սահմանի մոտ հուլիս, օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Գետիկ գետի Վահան գյուղից վերև հատվածում օգոստոսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս):






Ստորերկրյա ջրեր

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնադբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի ծախսի միջին ամսական արժեքները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկի տեսքով:




**ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**


Հուլիս / 2017



Օգոստոս / 2017



Սեպտեմբեր / 2017




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- | | |
|--|--|
| ● Մարզկենտրոն | ● Մակերևութային ջրերի որակի դասեր |
| ● Քաղաքներ | ● 2-րդ դաս |
| ● Գյուղեր | ● 3-րդ դաս |
| ▲ Ջրի նմուշառման դիտակետեր | ● 4-րդ դաս |
| — Գետային ցանց | ● 5-րդ դաս |
| — ՀՀ պետական սահման | |
| — Լճեր և ջրամբարներ | |
| — Դերեղ գետի ավազան | |



**ԱՂՍՏԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐԱ ԶՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**

Հուլիս / 2018




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- | | |
|--|-----------------------------------|
| ● Մարզկենտրոն | ● Մակերևութային ջրերի որակի դասեր |
| ● Քաղաքներ | ● 2-րդ դաս |
| ● Գյուղեր | ● 3-րդ դաս |
| ● Ստորերկրյա ջրերի դիտակետեր | ● 4-րդ դաս |
| ● Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր | ● 4-րդ դաս |
| — Գետային ցանց | |
| — ՀՀ պետական սահման | |
| — Աղստե գետի ավազան | |



Սեպտեմբեր / 2018



Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածք



Մակերևութային ջրեր


Ախտորյան գետի Ամասիայից վերև հատվածում ջրի որակը օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Ամասիայից ներքև հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գյումրիից վերև հատվածում՝ հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Գյումրիից ներքև հատվածում հուլիս ամսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «անբավարար» (4-րդ դաս): Բազարանից ներքև հատվածում հուլիս ամսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Աշոցք գետի Մուսայելյանից վերև հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանի հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Կարկաչուն գետի գետաբերանում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Օգոստոսին և սեպտեմբերին Մեծամոր գետի Վաղարշապատից հարավ և Վաղարշապատից հարավ-արևելք ընկած հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Ռանչպարից ներքև ընկած հատվածում օգոստոսին Մեծամոր գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):






Ստորերկրյա ջրեր

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 13 բնադրյուրում, 5 շատրվանոց և 17 չշատրվանոց հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով.




Շատրվանող հորատանցքեր
Ծախս, լ/վ

Ախուրյանի ՋԿՏ





Գրունտային ջրհորներ
Մակարդակ, մ

Ախուրյանի ՋԿՏ



**ԱՌՈՒՐՅԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ


- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- Ջրմբ. նմուշառման դիտակետեր
- Ջրի նմուշառման դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Ախուրյան գետի ավազան

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



ՄԵԾԱՄՈՐ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր


Քասախ գետի ջրի որակը Ապարանից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Ապարանից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Աշտարակից վերև հատվածում հուլիսին և օգոստոսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Աշտարակից ներքև հատվածներում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Քասախ գետի գետաբերանում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Շաղվարդ գետի Փարպիից ներքև հատվածում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Հրազդան գետի Քաղսիից ներքև, Արգելից ներքև, Երևանից ներքև, Գեղանիստի մոտ և գետաբերանի հատվածներում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Արգնի ՀԷԿ-ից ներքև հատվածում՝ հուլիսին՝ «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Գետառ գետի գետաբերանում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Մարմարիկ գետի Հանքավանից վերև հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանում հուլիսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):



Կոնց. (մգ/դմ³)

Ամոնիումիոն


Հրազդան գետ



Կոնց. (մգ/դմ³)

Ֆոսֆատ իոն


Հրազդան գետ



Կոնց. (մգN/դմ³)

Ամոնիումիոն


Գետառ գետ




Կոնց. (մգN/դմ³)

Նիտրիտ իոն



Գետառ գետ










Ստորերկրյա ջրեր

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 6 բնադրություն, 9 շատրվանող և 7 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:





**ՔԱՍԱԽ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ
ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- Ջրմբ. նմուշառման դիտակետեր
- ▲ Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր
- ◆ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
- Գետային ցանց
- Լճեր և ջրամբարներ
- Քառակուսի գետի ավազան


Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Մեպտեմբեր / 2018




ՀՐԱԶԴԻԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- Ջրմբ. նմուշառման դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի դիտակետեր
- Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- ԵՐԵՎԱՆ
- Հրազդան գետի ավազան



Մևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Զկնագետ գետի Մեմյոնովկայից վերև հատվածում ջրի որակը հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հուլիսին՝ «անբավարար», օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Մասրիկ գետի Վերին Շորժայից վերև հատվածում ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Սոթք գետի հանքավայրից վերև հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Կարճաղբյուր գետի Աղբյուրաձորից վերև հուլիսին և սեպտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գետի ջուրը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Վարդենիս գետի Վարդենիկից վերև հուլիսին և օգոստոսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանում հուլիսին գետի ջուրը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս):

Մարտունի գետի Գեղհովիտից վերև հուլիսին և օգոստոսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Մարտունի գետի գետաբերանում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Արգիճի գետի Լեռնահովիտից վերև հուլիսին և օգոստոսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանում հուլիսին և սեպտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):





Ծակքար գետի գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Շողվազ գետի գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Գավառագետ գետի Ծաղկավանից վերև հատվածում հուլիսին և սեպտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիսին գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր

Մևանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 5 բնաղբյուրում, 6 շատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգ իրականացվել է 6 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:



ՄԵՎԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ԳԵՏԵՐԻ ԶՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Բաղարներ
- Գյուղեր
- Զրի նմուշառման դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Սևանի ջրավազանային կառավարման տարածք



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Վեդի գետի Ուրցաձորից վերև հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «լավ» (2-րդ դաս):


Արփա գետի Զերմուկից վերև ընկած հատվածում հուլիսին և օգոստոսին գետի ջուրը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Վայքից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում գետի ջուրը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Վայքից ներքև ընկած հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին գետի ջուրը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Եղեգնաձորից վերև հատվածում հուլիսին և սեպտեմբերին գետի ջուրը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Արենիից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):





Եղեգիս գետի Շատինից ներքև հատվածում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Արփա-Սևան թունելի ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս):



Ստորերկրյա ջրեր

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 10 բնադրյություն, 3 շատրվանող և 10 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:





**ԱԶԱՏ ԵՎ ՎԵՂԻ ԳԵՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- Ջրմբ. հնմուշտման
դիտակետեր
- Ջրի հնմուշտման
դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի
դիտակետեր
- Գետային ցանց
- 22 պետական սահման
Լճեր և ջրամբարներ
- Վեղի գետի ավազան
- Ազատ գետի ավազան
- Մակերևութային ջրերի
որակի դասեր
- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս




ԱՐՓԱ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ԶՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



- Մարզկենտրոն
- Բաղապներ
- Գյուղեր
- Տրի նսուշաւման
դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի
դիտակետեր
- Հետալիե ցանց
- Զէ պետական տանման
- Արփա գետի ափագան
- Արփա գետի ափագան

- Մանկերնության ջրերի որակի դասեր
- | | |
|---|----------|
|  | 2-րդ դաս |
|  | 3-րդ դաս |
|  | 4-րդ դաս |



Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Մեղրի գետի Մեղրիից վերև հատվածում հուլիս ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս): Գետաբերանի հատվածում գետի ջրի որակը հուլիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Կարճևան գետի գետաբերանում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ողջի գետի Քաջարանից վերև հատվածում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Քաջարանից ներքև հատվածում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Կապանից վերև հատվածում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Կապանի օդանավակայանից ներքև հատվածում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Աճանան (Նորաշենիկ) գետի Աճանանից վերև հատվածում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում երեք ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս):




Գեղի գետի Աջաբաջից վերև հատվածում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Որոտան գետի Գորայքից վերև հատվածում հուլիսին և օգոստոսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Միսիանից վերև և ներքև, ինչպես նաև Տաթև ՀԷԿ-ից ներքև ընկած հատվածներում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Միսիան գետի Արևիսից վերև հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիսին գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Վարարակ գետի Գորիսից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Գորիսից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում՝ «վատ» (5-րդ դաս):






Ստորերկրյա ջրեր

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 7 բնադիտարկում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:




ՄԵՂՐԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՈՐԱԿԸ

Հուլիս / 2018



Օգոստոս / 2018




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Մեղրի գետի ավազան

Մակերևութային ջրերի
որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Մեպտեմբեր / 2018




ՈՂՋԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՈՐԱԿԸ

Հուլիս / 2018



Օգոստոս / 2018




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Ողջի գետի ավազան


Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Սեպտեմբեր / 2018



ՈՐՈՏԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Քաղաքներ
- Գյուղեր
- Ստորերկրյա ջրերի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Որոտան գետի ավազան

Մակերևութային ջրերի որակի դասեր


- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Արաքս գետ

2018թ. սեպտեմբերին վերցվել են փորձանմուշներ Արաքս գետի ջրի 11 դիտակետից: Վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնաստնաբանական ՍԹԿ-ներով գնահատման, դիտվում է վանադիումով, որոշ փորձանմուշներում պղնձով, քրոմով, մանգանով, երկաթով և ալյումինով բարձր աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշներից գերազանցվել են լուծված թթվածնի, ԹԿՊ-ի, ԹՔՊ-ի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, ցինկի, նիկելի և սելենի ՍԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ըստ առանձին ամիսների տրվում է հավելված 6-ում: Հատակային նստվածքներում որոշված որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են աղյուսակի տեսքով.

Կոնցենտրացիա, գ/կգ	Դիտակետ		
	AMS_1	AMS_2	AMS_3
Ալյումին	4.35	69.61	69.20
Երկաթ	15.67	48.93	89.76
Մանգան	1.027	0.950	1.049
Նիկել	0.233	0.098	0.116
Պղինձ	0.053	0.339	0.532
Արսեն	0.008	0.007	0.011
Մոլիբդեն	0.0002	0.0151	0.0399



Ծաղկաձորում շրջակա միջավայրի մոնիթորինգ



Մթնոլորտային օդ

Ծաղկաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:



Անշարժ դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 275, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 391 փորձանմուշ:

Մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:


Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.



Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.



Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- Հանապարհներ և փողոցներ
- Բնակավայրերի սահման



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)



Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակետեր
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Բնակավայրերի սահման



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)




Հողային ծածկույթ

2018թ. 3-րդ եռամսյակում վերցվել է հողային ծածկույթի 10 փորձանմուշ՝ հողում մետաղների պարունակության գնահատման նպատակով:

Կոնցենտրացիա, գ/կգ	ՍԹԿ, գ/կգ	Դիտակետ									
		1	2	3	4	5	6	7	8	9	10
Լիթիում	0.032	0.023	0.020	0.015	0.019	0.020	0.016	0.016	0.021	0.019	0.022
Նատրիում	—	10.34	11.53	14.97	79.79	13.05	6.06	5.43	5.91	6.16	5.64
Մագնեզիում	—	3.60	4.09	1.75	2.64	2.09	1.77	1.51	3.67	3.44	2.80
Կալիում	—	14.62	17.02	29.80	17.24	15.47	13.38	9.62	9.10	12.68	13.93
Կալցիում	—	11.18	22.31	6.27	8.72	11.03	8.27	9.91	16.60	17.50	14.53
